№ 141 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 2

1909
ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 2 № 141

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Базарная уп. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՔԱՐԻՆԻ

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».
Կովկասից դուրս գտնվող անձերի և բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

Յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը 5 ր. 50 կ.։
Ամերիկա՝ 3 դոլլար, Եւրոպա՝ 15 ֆրանկ, Թիւրքիա՝ 60 ղրուշ։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ։
հիմնարկութիւնների յայտարարութիւնները հիմնարկութիւնները՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ!

Սրանով պատիւ ունենք տեղեկացնելու Թիֆլիսի և շրջակայքի յարգելի հասարակութեան, որ յուլիսի 1-ից Ալիխանովի տանը
(Վorոնցովի առանձի մոս)
ԲԱՑ ԵՆՔ ԱՆՈՒՄ ԽԱՆՈԹ ՌՈՒՍԱԿԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ
ԿՕՇԿԵՂԷՆԻ
Խանութում կը վաճառվեն Պետերբուրգի, Վարշավայի և Վիէննայի ձևի ապրանքներ։ Ստացված են ապրանքներ ամենալաւ ֆաբրիկաներից։ Ապրանքի լաւ յատկութեան և շքեղութեան համար պատասխանատու ենք։ Բոլոր ապրանքների գները մատչելի են և առանց սակարգութեան։ Ցուսով ենք, որ յարգելի հասարակութիւնը կը յաճախէ մեզ մօտ և կը հաճոյվի մեր ասածներում։
Ցարգանքով՝ Կ. ՕՀԱՆԵԱՆՑ և ՈՐԴԻՔ
(առ.) (Հ.)

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆը
սրանով յայտարարում է, որ դպրանոցի համար
ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ
բարձրագոյն կրթութեամբ, որ պիտի աւանդէ առաջին երեք դասարաններում ռուսաց լեզու՝ 15 դաս, և վերջին չորս դասարաններում լատիներէն՝ 12 դաս։
Դասագինն է 60 բուբլի։ Ռոճիկը տրվում է պաշտօն մտնելու օրից։
Ցանկացողները պէտք է դիմեն տեսչին մինչև օգոստոսի 10-ը։
(առ.) (Ե. Հ. Կ.) 579. 5—5

ԹԻՖԼԻՍԻ II ՓՈԽԱԴԱՐԱ ՎԱՐԿԻ ԸՆԿ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆը
յայտնում է, որ Ընկերութիւնը կապ հաստատելով Թիւրքիայի բանկային հաստատութիւնների հետ ձեռնտու պայմաններով, ընդունում է յանձնարարութիւններ փող փոխադրելու հետեւեալ քաղաքները՝
Կ. Պոլիս, Տրապիզոն, Կերասուն, Օրդու, Սամսոն, Բիւզ, Տրիպոլիս, Գիւմիւշխանէ, Բայբուրթ, Էրզրում, Երզնկա և Վան։
Նոյնպէս ընդունվում են և այլ բանկային յանձնարարութիւններ։
(Հ.) (առ.) 507. 5—5

ԹԱՏՐՕՆ
ՄՈՒԼԷՆ-ԷԼԵՔՏՐԻԿ
Այսօր փոփոխված ծրագրով.
Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբութիւն
ՄԱՏԹԷՈՍ II ԻԶՄԻՐԼԵԱՆԻ
հանդիպումը։
«Տիրզարդէնը Բերլինում»
Սքանչելի պատկեր ճոխ բնութեան։
«Իսպանական հարսանիք»
Ֆիլմ դ'Արտի հրատարակութիւնը։
«Դրամաններնները»
Դրաման։ Ֆիլմ դ'Արտի թատրոնի հրատարակութիւնը.
(Պարիզեան արտիստների խաղը)։
«Աքիշաներ կացնողի արկածները»
Ծրագրից դուրս
«Մարիոնէտների» թատրոնը ամերիկեան կենդանի սպիտակ մկներով։
Ցոյց կը տրվեն ուրիշ նոր համարներ էլ։
(առ.) 608. 1—1

ՄԵԾ-ՂԱՐԱԲԻԼԻՍԱՅՈՒՄ
բացված են
ԱՄԱՐԱՅԻՆ
ՁՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Կաթնատնտեսութեան, ջուլհակութեան, զամբիւղագործութեան։ Կը կարդացվեն մի քանի դասախօսութիւններ նաև գիւղատնտեսութեան ուրիշ ճիւղերից։
Աշակերտների համար կայ հանրակացարան։ Մտնելու համար չեն պահանջվում ոչ մի ցենզ և ձևականութիւն։
(առ.) (Ե. Հ. Շ.) 575. 6—4

ԲԺՇԿԱԳԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԿՆԱԲՈՅԺ
Վերանորոգել է հիւանդների ընդունելութիւնը։
Առաւօտեան ժամը 10—1-ը.
Երեկոյեան ժամը 5—7-ը.
Վելիամինովսկայա փողոց, № 8.
(Հ.) (առ.) 588. 5—5

ԹԻՖԼԻՍԻ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
երեթեկ հիւանդների համար ամեն օր, Վոկզալնայա 8, տ. Էնգիլհաճեանցի։
Տէլէֆոն 695
Ե. Գ. ՖԷԴՈՐՈՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, 8½-ից մինչև 9½, ներքին հիւանդ.։
Վ. Դ. ԳԱՄԲԱՇԻՋԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 11—12 ժամը, ներքին և երեխաների։
Բ. Ա. ՊՕՊՈՎԵԱՆ երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ 12—1 ժամը, կոկորդի քթի և ականջի։
Գ. Մ. ՄԱԿԱՐԵԱՆ երեքշ. և ուրբաթ օրերը 12—1 ժ., ներքին։
Ա. Ն. ԴԻԱՍԱՄԻՋԷ ամեն օր, 11½-ից մինչև 12½ ժ., սիֆիլիս և կաղուկ հիւանդութիւններ։
Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամեն օր, խիրուրգիական և կանանց հ. 1—2 ժամը։
Ի. Դ. ԳՕՄԱՐԹԵԼԻ ամեն օր, ներքին և երեխաների, 2—3 ժամը։
Բ. Ս. ՄՈՒՇԵԼՈՎ ամեն օր, բացի կիրակի օրերից, 2—2½ ժ., աչքի հիւանդ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Գ. ՄԻՐԶՈՅԵԱՆ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների։
Ն. Գ. ԶԻԶԻՆԱՁԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների։
Հիւանդանոցում կատարվում են միկրոսկոպական, բակտէրիոլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս ծաղիկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն։ Վճար խորհրդի համար 50 կոպէկ։
(օ. մ.) ա. 38. 100—57

ԵՐԷԿՎԱՑ ՅՕԴՈՒԱԾԻ ԱՌԻԹՈՎ

«Մշակի» երէկվայ համարում մենք զետեղեցինք Լ. Մկրտչեանի յօդուածը, գրված Ալէքսանդրիայից, Թիւրքահայերի տրամադրութիւնների մասին դէպի օսմանեան վարչութիւնը և դէպի օտար միջամտութիւնները։

Ադանայի սոսկալի աղէտը այնքան խոր ազդել է Թիւրքահայ մտածողների վրա, որ նրանք այլևս չեն վստահում օսմանեան կառավարութեան և Թիւրք տարրի վրա։ Մի բարբարոսական դժոխային արհաւիրքով կործանվեց Ադանայի շուրջն ապրող հայութիւնը, ինչպէս տասն տարի առաջ եղած անկարագրելի գազանութիւնները և ջարդերը աւերեցին Թիւրքահայաստանի արևելեան մասերը և աւելի քան հարիւր հազար հոգի դուրս նետեցին երկրի միջից դէպի փախուստ և գաղթականութիւն։

Թիւրքահայը անկեղծ կերպով ողջունեց օսմանեան սահմանադրութիւնը և ցանկացաւ, իբրև օսմանեան քաղաքացի, եղբայրաբար մասնակցել ընդհանուր պետութեան, ընդհանուր հայրենիքի բարեշինութեան գործին. բայց հայի այդ օսմանեան հայրենասիրութեանը այնպիսի մի դիւական մահաթոյն պատասխան տուեց Ադանան, որ սառեցին բոլոր ողջագուրանքները, եղբայրակցական ժպիտները և թեւակցութեան ծրագիրները։

Հայութեան բնաջնջումով պատասխանեց Միջերկրականի մահմեդականութիւնը հայի քաղաքացիական միասնակեցութեան կոչերին։

Քահայի համար։ Այն օրը, երբ Նրան պատմութիւնը կանչում էր կեանքի և ուրախութեան, նա տեսաւ այնպիսի մի զարհուրելի արիւնի բաղանիք, որպիսին շատ քիչ է յիշում նոյն այդ պատմութիւնը իր տարեգրութիւնների մէջ։

Այս, կասկածելի էր տեսնել, որ օսմանեան սահմանադրութիւնը բերեց հայերի համար արիւնի մի այնպիսի հեղեղ, որպիսին նոյնիսկ հին ըէժիմի օրով չէր արտայայտվել այդ կատաղութեամբ։

Եւ ահա Թիւրքահայը մտածում է՝ «ինչ անենք, ուր գնենք մեր գլուխը, ինչպէս ապահովենք գոնէ մարդու կեանքը և գոյքը»։ Եթէ սեփական կառավարութիւնը անզօր է և անընդունակ է ապահովելու իր հպատակների կեանքը, գուցէ պէտք է որոնել պաշտպանութիւն և հովանաւորութիւն ուրիշ պետութիւնների կողմից։

Եւ հասկանալի է, թէ ինչու այնքան ժողովրդականութիւն ստացաւ կարճ միջոցում ռուսական հովանաւորութեան խնդիրը Թիւրքահայերի շրջանում։

Անվստահութեան այն զգացմունքը, որ յայտնվեց Թիւրքահայի սրտում դէպի օսմանեան գործողները և մահմեդական խուժանի բնազդները, աւելի ևս ոյժ ստացաւ, երբ օսմանեան կառավարութիւնը սկսեց ձգձգել Ադանայի ջարդարարների դատը և պատժումը։

Սակայն Թիւրքահայը ինքն իրան օրօրում է ենթադրութիւնների և կարելիութիւնների անհաստատ յոյսերով։

Եւրոպական ոչ մի պետութիւն, և նրանց թւում Ռուսաստանը, ամենևին տրամադրված և պատրաստված չէ մտցնելու իր զօրքերը Թիւրքիա և յայտարարելու, թէ վերջանում է օսմանեան իշխանութիւնը և սկսվում է նորը։

Իսկ քանի որ այդ չը կայ և ընդհանուրը դեռ գերիշխում է այն միջազգային հայեցակէտը, թէ օսմանեան պետութիւնը պէտք է մի քանի ժամանակ էլ պահպանի իր գոյութիւնը Եւրոպական հաւասարակշռութեան համար, անշուշտ, հայը շարունակելու է մնալ իր ներկայ քաղաքական աշխարհագրական պայմանների մէջ և նա պէտք է միջոցներ մշակէ ներքին նպատակայարմար գործունէութեամբ պահպանելու իր դիրքը և զոհ չը դառնալու գազանային վայրագութիւններին, որոնք կարող են բռնկվել, եթէ թուրքական օսմանեան պետական այն գործողները, որոնք ցանկանում են վերաստեղծել իրանց պետութիւնը արդարութեան հիմքերի վրա։

Ա. Քալանթար

ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Կաթողիկոսական տեղապահ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանը հետեւեալ շրջաբերական հեռագրով, ուղղված Եփրեմ վարդապետին, յայտնում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս II-ի ժամանումը Էջմիածին, կիրակի, յունիսի 28-ին։

«Բարձրեալ Աստուծու կամքով, հովանաւորութեամբ մեր Ողորմածագոյն Կայսրի, Նորին Սրբութիւնը ժամանեց այողութեամբ Էջմիածին և սուրբ Միածնի տեղանի առաջ վեր առաքեց ջերմ աղօթք Թագաւոր Կայսրի երկրակեցութեան, հայոց եկեղեցու բարգաւաճման և հայկազեան ազգի բարեկեցութեան համար»։

Տեղապահ Գէորգ արքեպիսկոպոս

ԹԷՀՐԱՆԻ ԳՐԱՒՈՒՄը

Մենք ստացանք Բաշտից, յունիսի 30-ից, հետեւեալ սեփական հեռագիրը.

Այսօր, առաւօտեան ժամը 9-ին, Բաշտի և Ղազվինի յեղափոխականները յարձակվեցին Սալթանաբադի վրա, ուր ապրում է շահը։

Սպանվածները շատ են։

Ժամը 7-ին միւս կողմից բախտարցիները և յեղափոխականները յարձակվեցին Եսի-Թէհրանի վրա և, վերցնելով Թօփխանէն, մեծ ջարդ առաջացրին։ Գնալը երկու տեղում ևս շարունակվում է։

Սիպէհդարն արդէն կարմիր դրշակ է բարձրացրել։

Գիլանի և Ղազվինի նահանգները ռուսական ապրանքի դէմ ժողովրդական բոյկոտ են յայտարարել։ Ներսէս

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Լոնդոն, 30 յունիսի

Ռէյտէրին հաղորդում են Թէհրանից յունիսի 30-ին, առաւօտեան 10 ժամին.

«Յունիսի 30-ին, առաւօտեան 5 ժամին, նացիոնալիստները մտան Թէհրան երեք դռներով։ Ներկայումս կօզակները գրաւած ունեն կենտրոնական հրապարակը։ Փողոցներում յամառ կռիւ է մղվում։ Բոլէ առ բոլէ սպասվում է, որ շահը կը թաղվի արտասահմանեան միսիոներից մէկում»։
(Հ. Գ.)

Թաւրիզ, 30 յունիսի

Ուրմիայից հաղորդում են յունիսի 24-ից, որ քաղաքը հանգստանում է։ Յունիսի 19-ին այստեղ եկած թիւրքաց նոր հիւպատոսը քաղաքից հեռացրեց թիւրքական զինուորներին նախկին կանգնելու տեղերից գիւղերում և հաստատ դիտաւորութիւն յայտնեց նպաստելու հանգստութեան պահպանմանը քաղաքում ու շրջանում և առաջն առնելու պարսից կառավարութեան և տեղական ազգաբնակութեան իրաւունքների խախտման։ (Հ. Գ.)

Լոնդոն, 30 յունիսի

Ռէյտէրին հեռագրում են Թէհրանից, որ քաղաքի հիւսիսային մասը ամբողջապէս նացիոնալիստների ձեռքումն է, որոնք դրել են այստեղ իրանց պահակախմբերը և պահպանում են օրինակելի կարգ։ Սարդար Ասադը և Սիպէհդարը գրաւում են մէջլիսը։ Շահի կօզակների նշանաւոր թիւ անցաւ նացիոնալիստների կողմը։ Որպէս հաւատացնում են, նացիոնալիստները դիտաւորութիւն ունեն շուտով իրանց բոլոր ոյժերով շարժվել դէպի այն թաղը, որ գրաւած ունեն կօզակները։ Ազգաբնակութիւնը ոգևորված է և խրախուսում է նացիոնալիստներին։

Անգլիական միսսիայից ոչ-հեռու յունիսի 30-ին լսվում էր սաստիկ հրացանաձգութիւն։ Նացիոնալիստների կորուստներն աննշան են։ (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարիզ, 30 յունիսի

Պատգամաւորների ժողով։ Կլէմանսօ մի ճառ արտասանեց, որի մէջ շեշտեց, որ սոցիալիստները կողմնակիցներ են հանդիսանում բռնութեան, որը Թէօրիայի մէջ հերքում են, իսկ գործնական կեանքի մէջ արդարացնում։ Ապա նա յայտնեց, որ ծերութեան դէպքում բանւորներին ապահովելու օրինագիծը կընդունվի դեռ ևս մինչև օրէնսդրական շրջանի աւարտումը, հակառակ դէպքում ինքն այդ ժամանակ այլ ևս մինիստր չէ լինելու։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 30 յունիսի

Չորս հովանաւորող պետութիւնների՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի և Իտալիայի կառավարութիւնները փոխադարձ համաձայնութեամբ սկսեցին անցեալ տարվայ ընթացքում հեռացնել իրանց զօրամասերը Կրետէից, որովհետև արդէն ըստկվել էր հանգստութիւն տիրել կղզու վրա։ Վերջին զօրամասերը պէտք է հեռանային կղզուց՝ 1908 թ-ին մշակած պլանի համաձայն՝ ներկայ տարվայ 14—27 յուլիսի ընթացքում։ Ղեկավարվելով վերոյիշեալ համաձայնութեամբ, հովանաւորող պետութիւնները սկսեցին կարգադրութիւններ անել վերջնականապէս դուրս բերելու համար ցամաքային զօրքերը Կրետէից որոշեալ ժամանակամիջոցում և ծանուցանելու այդ բանի մասին Բ. Դրանը։ այդ ծանուցումը թեանը չորս պետութիւնների ներկայացուցիչները Կ. Պոլսում։ Ծանուցման մէջ մատնացոյց է անվում, որ հեռացող զօրքերի փոխարէն պետութիւնները թիւրքաց դրօշակը և հովանաւորող պետութիւնների դրօշակները պաշտպանելու և Կրետէի մահմեդականների ապահովութիւնը երաշխաւորելու համար կը պահեն Սուտայի ծովածոցում մի-մի զինուորական նաւ։ Չորս պետութիւններից իւրաքանչիւրի կողմից, որոնց ներկայութիւնը կղզու ջրերում կը վկայէ սուլթանի գերիշխանութիւնը և պետութիւնների հովանաւորութիւնը կղզու վրա։ Ընդունելով և այն, որ իրերի ներկայ դրութիւնը կղզու վրա չէ կարող հարցի վերջնական լուծումն նկատվել, հովանաւորող պետութիւնների կառավարութիւնները յայտարարում են միևնոյն ժամանակ, որ նրանք վերապահում են իրանց իրաւունք յարմար ժամանակ ընտրել բանակցութիւններ վարելու Թիւրքիայի հետ կղզու ապագայ վիճակի մասին։ Կրետական իշխանութիւններին ուղղած շրջաբերականի մէջ մատնացոյց է արված, որ պետութիւնների որոշումը՝ յետ կանչել իրանց զօրքերը Կրետէից՝ հիմնված է այն համոզման վրա, որ կրետական իշխանութիւնները կարող կը լինեն պահպանել կղզու վրա կարգը և ապահովել ժամանակի ազգաբնակութեան դրութիւնը։ Խոստանալով այսուհետև ևս բարեացակամութեամբ զբաղվել կրետական հարցով, հովանաւորող պետութիւնների կառավարութիւնները միևնոյն ժամանակ յայտարարում են, որ նրանք վերապահում են իրաւունք հարկաւոր դէպքում միջոցներ ձեռք առնելու կղզում հանգստութիւնը և կարգը խախտվելու դէպքում։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 30 յունիսի

Պետերհոֆեան կայարանում Թագաւորին դիմաւորելու ժամանակ գեն.-մայոր Լէրմոնտով, գլուխ կանգնելով պետերհոֆեան պատգամաւորութեան, բաղդ ունեցաւ ժառանգելու Նորին Մեծութեանը անդրէվեան ժապաւէնով յօբելեանական ոսկէ մեդալ, որ հատել են Պետերհոֆի երկուհարիւրամեակի առիթով։

Առևտրի մինիստրը հաստատեց կանոնադրութիւն կերակրանիւթերի կեղծման դէմ կուռելու կոմիտէի մասին։

Յունիսի 30-ին քաղաքային դումայի Ալէքսանդրեան դահլիճում առևտրի մինիստրի և ժամուլի գործերի գլխաւոր վարչութեան հրամանատարի ներկայութեամբ կայացաւ հրատարակիչների և գրավաճառների առաջին համառուսական համագումարի հանդիսաւոր բացումը։ Կազմակերպիչ յանձ-

նական ուրվագիծ։ Եթե դիտենք, հիմա ինչպես ենք ապրում։ Ֆաշիստական ռեժիմը մեր երկրում ստեղծել է ամենաանբարոյական, ամենաանարդար, ամենաանմարդկային հասարակությունը։ Ինչպես գրում է Ֆրանսիայի Ազգային ասամբլեայի նախագահ Էռիոն, «Ֆրանսիան ապրում է ամենամեծ ամոթի ժամանակներ»։ Ֆրանսիան ապրում է ամենամեծ ամոթի ժամանակներ, որովհետև ֆաշիստական ռեժիմը ոչ միայն ոչնչացրեց ազատությունները, ոչնչացրեց ամենաանարդար ընտրական օրենքը, ոչնչացրեց ամենաանարդար դատարանները, ոչնչացրեց ամենաանարդար մամուլը, ոչնչացրեց ամենաանարդար ռադիոն, ոչնչացրեց ամենաանարդար դպրոցը, ոչնչացրեց ամենաանարդար բանակը, ոչնչացրեց ամենաանարդար ոստիկանությունը, ոչնչացրեց ամենաանարդար ֆինանսական համակարգը, ոչնչացրեց ամենաանարդար հարկային համակարգը, ոչնչացրեց ամենաանարդար գործազրկության նպաստի համակարգը, ոչնչացրեց ամենաանարդար գյուղատնտեսությունը, ոչնչացրեց ամենաանարդար ... ոչնչացրեց ամենաանարդար ... ոչնչացրեց ամենաանարդար ...

ղող ունենալ բարերար ազդեցութիւն։ Պարզ է ուրեմն, որ վերոյիշեալ բովանդակութեամբ երգերը, որոնք շատ անգամ եղանակվում են աշուղներից, չը պիտի ունենան սովորողի վրա այն ազդեցութիւնը, ինչ որ կարող է առաջ բերել երաժշտութեան նման մի գեղարուեստ։ Այս դէպքում արդիւնքը լինում է ի հարկէ այն միայն, որ մանկան հոգին, նրա ճաշակը, նրա մտածողութեան եղանակը հում է անկիրթ, կամ աւելի լաւ է ասել՝ անտարբեր վիճակի մէջ։

Գուցէ ընթերցողը մեր ասածները չափազանցութիւն համարի, բայց դժբաղդաբար հայ դպրոցական կեանքում մի անջնջելի իրականութիւն է այս, որից շատ անգամ ազատվելու համար երգի ուսուցիչները առարկում են, «որ չը կան մանկական երգեր, ինչ անենք, այլ կերպ չենք կարող վարվել» և այլ այսպիսի մի շարք ըստ երևոյթին միայն սփոփիչ խօսքեր։ Բայց եթէ քննենք այս և սրանց նման առարկութիւնները, կը տեսնենք իսկապէս, որ մանկական երգեր համեմատաբար քիչ ունենք, բայց ասել, թէ չը կայ, այդ միանգամայն յանցանք կարելի է համարել։ Եւ կամ մի՞թէ քիչ կան ժողովրդական երգերի մէջ այնպիսիները, որոնք իրանց բովանդակութեամբ ժամչելի կարող են լինել երեխաների, մանաւանդ գիւղում մեծացածների համար։

Մեր նպատակից դուրս է այստեղ մանրամասնութիւնների մէջ մտնելով երգերի ընտրութեամբ կամ ցուցմամբ զբաղվել, բայց և չենք կարող չը հրաւիրել հայ ուսուցչի ուշադրութիւնը այս երևոյթի վրա, որի վերացումը ուսուցման գործի համար շատ կարևոր է։ Գ. Պալասանեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Գիւլլուջա (Սուրմ. գ.), 27 յուն.

Մի կողմից այս տարվայ հարկերի ծանրութիւնը, տեղիս բնակիչների տնտեսական աննախանձելի վիճակն և միւս կողմից էլ այս տարվայ հացի սաստիկ անբերրիութիւնը մեր գիւղը ձգել են ամենադժբաղդ և ամենաթշուառ վիճակի մէջ։ Տարվայ սկզբից գիւղացին մեծ յոյս ունէր լաւ հունձ ունենալ, բայց բնական աղէտները և մանաւանդ քամախառն կարկուտը գիւղացուն զրկեցին միանգամայն հունձից... Գիւղիս շատ տները ուտելու հաց չունեն։ Հացի պակասութիւնը յարմար առիթ տուեց մեր գիւղի վաշխառուներին։ Գիւղացիները, սովածութիւնից յուսահատված, դիմում են հասարակական այդ տգրուներին։ Վերցնում են դրանցից ցորեն՝ այն պայմանով որ իւրաքանչիւր սօմարին մի սօմար էլ շահ տան մինչև «կալերի հանելը»։ Գ.

—

Նովո-Ա֊ֆօն, 18 յունիսի

Կովկասի Փոխարքան, երէկ առաւօտեան ժամը 11½-ին, «Էրիկլիկ» զբօսանաւով ժամանեց Նովո-Ա֊ֆօն։

Փոքրիկ նաւահանգիստը զարդարված էր դրօշակներով և թարմ ծաղիկներով ու կանաչներով։ Կոմսին դիմաւորելու համար վանքի մայր մուտքի մօտ զգեստաւորված սպասում էին վանքի հոգևորականութիւնը, իսկ նաւահանգստում՝ շրջանի զինուորական և քաղաքացիական պաշտօնեաները, ինչպէս և ազգաբնակութեան ներկայացուցիչները։

Հէնց որ Փոխարքան ափ դուրս եկաւ, նրան դիմաւորեց Գուդաուտի պատգամաւոր Յովհ. Աշրաֆեանը, աղ ու հաց մատուցեց և բարի գալուստ մաղթեց։ Փոխարքան ապա մեկնեց Գագրի։

Կոմսին, Գուդաուտի հասարակութեան կողմից, ներկայացաւ մի պատգամաւորութիւն և խնդրեց թոյլատրել Գուդաուտում բանալ երկսեռ դիմնազիա, որի համար Գուդաուտի պահեստի գումարից թոյլատրվի ծախսել 20,000 ռուբլի։

Առ այժմ բացվելու է հինգ դասարան և ապա յաջորդաբար կաւելացվեն միւսները։

Եթէ իշխանութեան կողմից հաստատվի քաղաքի այդ ցանկութիւնն ի կատար ածել, ապա Գուդաուտը ներկայ սեպտեմբերից կունենայ միջնակարգ կրթական հիմնարկութիւն։

Թէ Գուդաուտից և թէ շրջանի գիւղերից քառասուն հայ աշակերտներ խնդիրք են ներկայացրել և ցանկութիւն յայտնել՝ գիմնազիա բացվելու դէպքում ընդունվել։

Զուգուրա

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՑԻՑ

—

25 յունիսի

Ի լրումն ձեր թղթակցի հաղորդած տեղեկութիւնների Ամենայն Հայոց Կաթողիկոսի Մօսկվա գտնված ժամանակի մասին, հարկ ենք համարում առաջ բերել և մի տեղեկութիւն, որը, երևի, ձեր թղթակիցը մոռացել է հաղորդել։

Ի թիւս այլ պատգամաւորութիւնների, Վեհափառին ներկայանալու պատիւ ունեցաւ և «Մօսկվայի Հայուհեաց Ընկերութեան» պատգամաւորութիւնը, բաղկացած նախագահուհի տիկին Ժամհարեանից և վարչութեան անդամուհիներից, որոնց կողմից տիկին Թ. Կաճկաճեան կարդաց հետևեալ ուղերձը։

«Վեհափառ Տէր,

«Մօսկվայի հայ գաղութի տիկնայք և տեղիս «Հայուհեաց Բարեգ. Ընկերութիւնը» բուռն զգացմունքով և սրտի անկեղծ ուրախութեամբ ողջունում են ձեր գալուստը։

Վեհափառ Հայր, ճակատագրի բերմամբ մենք կտրված ենք մեր մայր հողից, մեր սգաւոր թիւրքահայ քոյրերից, բայց մեր հոգու ամբողջ էութեամբ ցաւակից ենք նրանց։ Նրանց ցաւը մեր ցաւն է։ Ո՛չ տարածութեան հեռաւորութիւնը, ոչ հալածանքը, ոչ օտար երկիրներում տարագնաց լինելը երբէք չեն կարող հայ կնոջ սրտից ջնջել այն սուրբ զգացումները, որ նա դարերից ի վեր աւանդաբար պահպանել է իր սրտի խորքում, իբրև իր սրբութիւն սրբոցը, այն է՝ սէր դէպի իր հեռաւոր հայրենակիցները, դէպի իր մայրենի լեզուն և կրօնը։ Ազգայնութեան այդ հզօր գործօնները միշտ շաղկապել են աշխարհի զանազան ծայրերում ցիր ու ցան եղած հայերին, և հայ մայրը միշտ եղել է մատաղ սերնդի քնքոյշ սրտերում ազգային պարտաճանաչութեան մեծ սկզբունքների ներշնչողը, և սերունդը ապագայում զարգանալով հայութեան համար պիտանի անդամ է դարձել։

«Վեհափառ Տէր։ Ազգային աւանդութիւնների կենտրոնը և պահպանողը միշտ եղել է Մայր Աթոռը, նամանաւանդ որը հայ ազգը բաղդ է ունեցել Լուսաւորչի գահի վրա բազմած տեսնելու Ձերդ Վեհափառութեան նման անձրի և արժանաւոր անձն։ Կեցցէք դուք յուրախութիւն մեր. կեցցէ ձեր հայրապետական հովանաւորութիւնը և օրհնանքը հայցող հայ ժողովուրդը»։

Կաթողիկոսը, ոտքի կանգնած, լսեց ուշադրութեամբ և իր պատասխանի մէջ խրախուսեց կանանց՝ հանդուն գործել բարեգործական և մարդասիրական ասպարէզում և խնդրեց թողնել իրան այդ ուղերձը, որ և տ. Թ. Կաճկաճեան դրեց սեղանի վրա։ Հ.

ԽՕԼԵՐԱ

(Հեռագր. Դորձակ.)

—

Արխանգէլսկ, 30 յունիսի.—Խօլերայից հիւանդացան 20, մեռան 10 հոգի։

Կրօնշտադտ.—Յունիսի 28-ին խօլերայից հիւանդացան 4, մեռաւ 1։ Յունիսի 29-ին հիւանդացան 3. հիւանդներ կան 30 հոգի։

Սիմբիրսկ.—Վերևից եկած շոգենաւից հանեցին առաջին հիւանդը խօլերայից,

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութիւնը դիմել է կովկասեան Փոխարքայի պաշտօնակատարին խնդրելով թոյլատրել Թիֆլիսում առաջիկայ նոյեմբերի 20—30-ը կազմակերպելու մեղուապահութեան 1-ին հերթական-տօնավաճառ, միաժամանակ ներկայացնելով ցուցահանդէսի ծրագիրն ու կանոնները ի հաստատութիւն։ Ցուցահանդէսին մասնակցել ցանկացողները պէտք է խնդիրք ներկայացնեն ոչ ուշ, քան նոյեմբերի 1-ը։ Էքսպոնենտներից իւրաքանչիւրի համար, համաձայն նախագծի, յատկացվում է ձրի տեղ 3 քառակուսի սաժէն տարածութեամբ. դրանից աւելին պահանջող էքսպոնենտները վճարելու են ամեն մի աւելորդ քառակուսի արշինի համար 2 ռուբլի։

✦ Վերջնական հաստատութիւն ստացած օրէնքի համաձայն, Անդրկովկասի շրջանում 1909—1911 թւականների ընթացքում քաղաքային անշարժ գոյքերից պէտք է գանձվի զեմստվային եկամուտ տարեկան 732,500 ռուբլի։ Այդ գումարը համաձայն ազգաբնակութեան թւի պէտք է բաշխվի քաղաքների վրա։ Դրա համաձայն կովկասեան Փոխարքայի գիւանատունը հաղորդել է Թիֆլիսի նահանգապետին, որ յիշեալ եռամեակի համար (1909—1911 թիւը) Թիֆլիսի նահանգի քաղաքային անշարժ գոյքերից հասանելիք գումարը կազմում է 241,000 ռ. և Զաքաթալայի շրջանից՝ 1,500 ռ.։

✦ Կ. Հ. Բարեգործ. Ընկերութեան գրադարանի բացումը անսպասելի կերպով ուշանում է։ Հարկաւորվել է կազմել ընկերութեան սեփականութիւն ունեցող մօտ 11 հազար գրքերի մանրամասն ցուցակը (բացի Ս. Գուլիժամբարեանի նուիրած գրադարանը, որ ցուցակ ունի), որով զբաղված է գրադարանապետը ահա հինգ ամիս, և դեռ աշխատանք կը պահանջի մօտ 3 ամիս։ Այնպէս որ գրադարանի բացումը տեղի կունենայ հոկտեմբերի սկիզբներին։ Մինչ այդ՝ խորհուրդը վճռել է մօտ ապագայում բանալ ընթերցարանը, որի կազմակերպութիւնը յանձնված է անդամ Զաքարեանցին։

✦ Վլադիմիրի նահանգի Մուրօմ քաղաքից տեղական ըէալական դպրոցի բարձր դասարանների աշակերտական մի խումբ, 17 հոգուց բաղկացած, էքսկուրսիայի նպատակով եկել է Թիֆլիս։ Էքսկուրսանտներին սիրալիր կերպով պատսպարել է ըէալական դպրոցը, իսկ առաջնորդել են քաղաքը և շրջակայքը ցոյց տալու նպատակով Թիֆլիսի ըէալական դպրոցի աշակերտները։

✦ Ռուսաց սինոդի կարգադրութեամբ Իմերէթիայի Դէօրգի եպիսկոպոսը նշանակվում է վրաց էկզարխութեան ժամանակաւոր կառավարիչ, իսկ էկզարխութեան ներկայ կառավարիչ Բազուի Գրիգորի եպիսկոպոսը ուղևորվում է Պետերբուրգ։

✦ Թիֆլիսի երկրորդ սինագոգայում յունիսի 28-ին տեղի է ունեցել հոգեհանգիստ հրէական սիօնիստների առաջին պարագլուխ Թէօդոր Գերցլի մահվան միամեայ տարեդարձի առիթով։ Հոգեհանգիստից յետոյ արտասանել են ճառեր։

✦ «Մշակի» երէկվայ համարում (№ 140) տպված «Ադանայի սարսափները» յօդուածը արտատպված է «Բէչԝ» լրագրից, որ մոռացմամբ չէ յիշվել։

✦ Յուլիսի 1-ից սկսել է լոյս տեսնել Թիֆլիսում, ժամանակաւորապէս դադարած, վրացերէն «Զվէզնի Ազրի» թերթը։ Վերջինիս փոխարէն հրատարակվող «Զանգի» թերթը այսուհետև լոյս է տեսնելու միայն երկուշաբթի օրերը։

✦ Թիֆլիսի 7-րդ ոստիկանամասի մէջ մտնվող Նաւթլուղը ներկայումս առանձնացվում է և կազմվում յատուկ 12-րդ ոստիկանամաս։

✦ Այնակողմեան ֆրակցիայի անդամները Լազարիրսկին և Շէնկէլովը Կովկաս են գալիս իրերի դրութեան հետ իր տեղում ծանօթանալու և երկրի կառավարութեան գործը վերակազմելու համար նախագիծ մշակելու նպատակով։

✦ Կ. Հ. Բարեգ. Ընկ. մշտական անդամ է գրվել Թիֆլիսեցի վաճառական, Յովսէփ Յովսէփեանցը։

✦ Նախկին տարիների օրինակով, այս ամարային սեզօնումն էլ Կօջօրի հայոց եկեղեցում կիրակի օրերը երգելու հրաւիրված է Բ. Բերինեանը իր քառաձայն երգեցիկ խմբով, որը կերգէ սկսած առաջիկայ կիրակի, յուլիսի 5-ից։

✦ Յունիսի 27-ին Դիդուբէի այգիներից մէկում տեղի է ունեցել մի ուշագրաւ յօբելեան։ Կովկասեան Փոխարքայի տպարանի գրաշարները յօբելեանական ճաշկերոյթով կատարել են իրանց արհեստակից Մ. Ֆ. Շալէվիչի գրաշարական ծառայութեան 50-ամեակը։ Տպարանի ու «Кавказъ» լրագրի խմբագրութեան կողմից ներկայացված է յօբելեարին ուղերձ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

«Հայ Գրողներ» Ա., կազմեցին Ղ. Աղայեան, Ա. Ա-հարոնեան, Յովհ. Թումանեան, Հ. Փափազեան։ Թիֆլիս, 1909, 688 էջ. գինն է 2 ռ.։

Զորս յայտնի և միաժամանակ խիստ տարբեր գրական արժանիքների տէր գրողներ ընկերացել են և բաց թողել մի ստուար հատոր «Հայ Գրողներ» վերնագրով։ Կազմող-հրատարակիչների առաջաբանը ուղղված է «ուսուցիչներին», ուրեմն վերոյիշեալ աշխատութիւնը ծառայելու է իբրև դասագիրք։ Առաջաբանի առաջին պարբերութեան մէջ պարզված է այդ «ձեռնարկութեան նպատակը», այն է՝ հայ գրողների երկերից ամբողջական գրուածքներ և կտորներ հաւաքել։

Եւ իսկապէս, կազմողները, թէպէտ խիստ միակողմանի և քմահաճօրէն, սակայն աշխատել են միայն ու միմիայն հաւաքել...

Ի հարկէ հաւաքածը դեռ չէ կարող դառնալ դասագիրք, որովհետև ամեն մի լաւ դասագիրք պէտք է կազմված լինի համապատասխան մանկավարժական սկզբունքների և յարմարեցված դասաւանդութեան խիստ որոշ ծրագրի։

«Այս հատորը պէտք է անցնել մեր դպրոցների IV և V դասարաններում»։ Բացի մեր դպրոցներից, ինչպէս կազմողներն են առաջարկում, վերոյիշեալ գիրքը գործածել կարող են՝ վայելելով նիւթի «ընտրութեան ազատութիւն մանաւանդ պետական դպրոցի ուսուցիչները»։ Կազմողները «ցանկութիւն» են յայտնում, որ իրանց աշխատութիւնը «տարածվի նաև հայ գերդաստաններում»։ Ուրեմն 688 էջերի վրա հաւաքած աշխատութիւնը առաջարկվում է և մեր դպրոցներին, և պետական դպրոցներին, և հայ գերդաստաններին։

Սակայն հնարաւոր է արդեօք կազմել մանաւանդ մի այնպիսի դասագիրք, որ կարողանայ угодить и нашимъ, и вашимъ, и всѣмъ.

Ի հարկէ ոչ։ Կազմողները շատ միակողմանի և նեղհայացք ոգով նախ կատարել են ընտրութիւն գրողների և ապա «հաւաքել» նրանց երկերից կտորներ մի ստուար հատորի մէջ, ի հարկէ չը մոռանալով ամենայարմարագոյն կերպով դեռ իրանցը տեղաւորել։ Կազմողները չեն բաւականացել միայն գրողի տիտղոսով, նրանք ստանձնել են և մանկավարժ-ուսուցչի, և կրիտիկոսի, և կենսագրականներ յօրինողի, և լեզուագէտի դերեր։

Կազմողների մանկավարժական-դասաւանդական փորձառութեան և հմտութեան աստիճանը երևում է միակ հետևեալ խօսքերից. «Երկերը այս հատորի մէջ մենք դասաւորել ենք այնպէս, որ դասաւանդութիւնը առաջ տարվի պարզից դէպի բարդը, նոր երկերից դէպի հին, մաքուր գրականից դէպի բարբառայինը։ Երկու արձակագիր հեղինակներ իրարից բաժանել ենք մէկ բանաստեղծի ոտանաւորներով, որ տաղտկալի միակերպութիւն չը լինի»։ Հէնց միմիայն այդքան։ «Պարզից դէպի բարդը» և «տաղտկալի միակերպութիւն չը լինի»։

Կազմող-հաւաքողները հանդիսանում են նաև շատ թոյլ կրիտիկոսներ։ Նրանք համարում են ամեն մի գրողի, որ մի քանի հատոր գրքեր ունի տպագրած, արժանի բաղմելու դասագրքի մէջ հայ գրողների շարքում։ Եւ ահա դասագրքում գրականութեան մէջ գնահատված յայտնի գրողների հետ՝ դուք տեսնում էք բաղմեցրած և հայկական Դարօրիօներ, Պօնսօն-դիւ-Տերրայներ և դրանց նման գրողներ։

Գրքի վերջում կցված են «Կենսագրական տեղեկութիւններ» և «Բառարան»։ Կենսագրական տեղեկութիւնների բաժնում ամենից լաւ ու փառաւոր կազմողներն էլի իրանց են տեղաւորել։ Կազմող Ղ. Փ.-ը տալիս է կազմող Ահարոնեանի և կազմող Աղայեանի մասին տեղեկութիւններ։ Կազմող Ղ. Ա.-ը տալիս է կազմող Թումանեանի և կազմող Փափազեանի մասին կենսագրական տեղեկութիւններ։ Աստուած տեղեկութիւններ համարի այդ։

Փոխարարձաբար միմեանց հասցէին ասված կոմպլիմէնտներ և ուրիշ ոչինչ։

Բառարանն էլ կազմված է շատ անմշակ. կան սխալ բացատրված բառեր. օրինակ՝ ստատիստ—բեմ սարքող և այլն, կուլիս—բեմի եռեզ, մաղութ—սև նաւթ, քիշմիր—լաւ տեսակի շալ, սելիոդկա—աղած ձուկ. կան բառեր թերի և անճաշակ բացատրված, օրինակ՝ Լևիաթան—առասպելական վիշապ, որ շրջապատում է ամբողջ երկրագունդը. Հէթէրա, Դէյէրա—հին Յունաստանի ազատարոյ կանայք, ընթռել—շան նստելը, պարադոքս — տարօրինակ ենթադրութիւն, վիրաւի—դիմացի պարող զոյգ, ֆարիա—առասպելական կատաղի կենայք, ֆօն—նկարի հիմքը, խորքը, ֆոկուս—ձեռնածութիւն, աչքակապութիւն։ Գրքի մէջ հանդիպում էք շատ բառեր, որոնք բացակայում են բառարանում, օրինակ՝ դուման, ծէգ, հուսքեր և այլն։

Վերոյիշեալ աշխատութիւնը, իբրև շատ շտապ կերպով կատարված թերի գործ, չէ կարող լուրջ կերպով բաւարարեցնել հայոց լեզուի և գրականութեան դասաւանդութեան պահանջները, սակայն կարող է լինել պիտանի, իբրև օժանդակիչ ձեռնարկ, դասատուների համար։ Կալֆաս

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 26 յունիսի

Սրանով պատիւ ունենք հայ հասարակութեանը խնդրելու, որ իր կարդացած ու իրան աւելորդ գրքերը տրամադրէ մեզ, որովհետև մենք շուտով պիտի բաց անենք Ղազախի գաւառի Թօուզ գիւղում գր.-ընթերցարան, նպատակ ունենալով մերովսանն աշխատել այդ շրջանի (Թօուզ գիւղը կենտրոն է 14 հայ գիւղերի) գիւղական ազգաբնակութեան մէջ ընթերցասիրութիւն տարածելու։

Գր.-ընթերցարանից ամբողջ շրջանի ազգաբնակութիւնն օգտվելու է ձրիաբար։

Մեր ստացած գրքերի մասին պարբերաբար ու մանրամասնօրէն հաշիւ կը ներկայացվի հասարակութեանը լրագրութեան միջոցով։

Գրքերը կարելի է ուղարկել և «Մշակի» խմբագրութեանը՝ մեզ յանձնելու համար։

Թօուզի ձրի գր.-ընթերց. հիմնադիրներ՝

Միքայէլ Մաղաքեան

Շամիր Գուրջինեան

—

Բաքու, 27 յունիսի

«Մշակ» լրագրի յունիսի 16-ի համարի (№ 127) «Ներքին լուրերի» բաժնում գետեղված էր, որ Բ. Հ. Կ. Մ. կրթական սեկցիայի խնամքով օգտվող Բռնակոթ գիւղի դպրոցի ուսուցիչ Ղարախանեանը «մինչև այժմ չէ ստացել իրան հասանելի ռոճիկը և հարկադրված է Բաքու գալու՝ իր հաշիւները ստանալու, թէև չունի դրա համար հարկաւոր ճանապարհածախս»։ Ապա մի շարք յաւելումներ խմբագրութեան կողմից։ Այդ առիթով բարեհաճեցէք տպել հետևեալ փաստացի հերքումը։

Բռնակոթ, գիւղի № 13 գործից երևում է, որ ամառսինների Ղարախանեանները հրաւիրված են եղել ուսուցչութիւն անելու 1908/9 ուսումն. տարվայ նոյեմբերի 13-ից մինչ մայիսի վերջը, 650 ռ. ռոճիկով, միասին։ Նոյն գործից երևում է ևս, որ 1) նոյեմբերի 14-ին Ղարախանեանը ստացել է 100 ռ., 2) յունվարի 28-ին պօստով փոխադրված է նրան ևս 100 ռ., 3) մարտի 16-ին կրկին պօստով ուղարկված է 100 ռ., 4) ապրիլի 28-ին անձամբ իրան վճարված 100 ռ.։ Մինչ յաջորդ նուագի ուղարկելը յունիսի սկզբին՝ ամսի 6 թւով նրանք զգուշացնում են բիւրօյիս նաժակով՝ Բռնակոթ փող չուղարկել առանց յայտնելու իրանց նոր հասցէն։ իսկ յունիսի 10-ի հեռագրով (Նախիջևանից) խնդրում են 50 ռ. փոխադրել, բայց չը սպասելով սեկցիայի բիւրօյի պատասխանին, նոյն ամսի 12-ին մուրհակով մանաւոր մարդուց ստանում են այդ գումարը և ճանապարհվում Թիֆլիս։ Յունիսի 15-ին այդ մուրհակը Ղարախանեանի նամակով հանդերձ ներկայացվում է բիւրօյիս գանձապահին մանաւոր մարդու ձեռով և շրջանվում։ Ուրեմն մինչ «Մշակում» այդ տեղեկութիւնը տպվելը Ղարախանեանները արդէն ստացած են լինում 450 ռ., այսինքն իրանց ռոճկի 70 %։ Այնուհետև Բաքու գալով ամսիս 16-ին և 18-ին ստանում են և 100 ռ., որից յետոյ նրանց մնում է միայն ստանալ վերջին 100 ռ.։

Յայտնելով այս փաստացի տեղեկութիւնները ի գիտութիւն ընթերցող հասարակութեան, վերջինիս ենք վերապահում որոշելու թէ որքան զզպարտիչ են Ղարախանեանի հաւաստիացումները ռոճիկ չը ստանալու վերաբերմամբ։ Թերևս կարելի լինէր աւելացնել և այն, որ, ինչպէս պարզվեց բիւրօյի յունիսի 18-ի հերթական նիստում, Ղարախանեան ամուսինների ներկայութեամբ,—Ղարախանեանը եկել է իր բագաւանակ ծնողների մօտ պաշտօն որոնելու, որովհետև նրան վաղուց յայտնի էր բիւրօյիս կարծիքը, որ ուսուցչի ապարէզը նրան բոլորովին չէ համապատասխանում։

Փոխ-նախագահ՝ Յակ. Ստեփանեանց

Գործավար՝ Տիգրան Սարգսեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՐՕԿԱՕՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, 25 յունիսի

Թէ որպիսի ողբմելի պատկեր ունի պարսկահայ կրթական գործը, աւելորդ եմ համարում ներկայիս մանրամասնութիւնների մէջ մտնել, որովհետև բազմիցս առիթ եմ ունեցել այդ մասին գրելու։ Տարիներ առաջ եղել են հեռատես մարդիկ, որոնք, փրկելու համար մի բուռը հայութեան ապագան, մտածել են գէթ, «կենտրօնական դպրոց» անուան տակ, մի միջնակարգ դպրոց ունենալ։ Սկզբում լոկ տեսական, վերացական ցանկութիւնը տարիների ընթացքում հասունացաւ և վերջ ի վերջոյ անխուսափելի պահանջ դարձաւ։ Վերջին մի քանի տարիները «Մշակի» ընթերցողներին էլ յայտնի է, որ շարունակ խօսվել և գրվել է պարսկահայերի համար կենսական նշանակութիւն ունեցող այդ խնդրի մասին։

Ներկայումս, անխուսափելի հանգամանքների և նիւթական նպաստաւոր պայմանների շնորհիւ, գործի հիմքը դրված կարելի է համարել։ Դպրոցական փառաւոր շէնքը և դրամագլխի մի խոշոր մասը դրսեցի ազգակիցների շնորհիւ գոյութիւն ունեն։ Թաւրիզահայերին հում է կամք և քիչ զոհողութիւն յանձն առնել, առաջիկայ ուսումնական տարվանից դպրոցի դռները բաց անելու համար. արդէն ընտրված է հոգաբարձութիւն, որը թեմական առաջնորդի նախագահութեամբ վերսկսել է անցեալ տարվայ շարժումների առիթով ընդհատված հանգանակութիւնը։ Հանդուցեալ Եգոր Զօհրաբեանի կտակի տոկոսներից այս տարի դժուար է օգտվել, որոշ արգելքների ձեռնարկութիւնների շնորհիւ. հետևաբար առաջին տարվայ դպրոցական ծախքը, որը երկու դասարանների համար նախատեսված է 2000 թուման, պիտի հոգայ Թաւրիզի հայ հասարակութիւնը։ Մի քանի տողեր դուցէ առիթ չունենայինք գրելու, եթէ իմացած չը լինէինք, որ մեր հարուստ համարվածներից ոմանք դժկամակութեամբ են մասնակցում հանգանակութեան և մասնակցողներից էլ մի քանիսը յարաբերական չափը չեն պահպանում։

Հայ առևտրականը կամ հարուստը հէնց իր տեսակէտով թող մօտենայ դպրոցական գործին, զուտ շահադիտական։ Ուսումը, կրթութիւնը միջոցներ են հասարակութեան բարեկեցութիւնը ստեղծող։ Որքան բարձր է հասարակութեան կրթական մակարդակը, որքան մարդիկ լաւ զինված են գոյութեան կուռում իրանց գոյութիւնը ապահովող զէնքերով, այնքան բարեկեցիկ է այդ հասարակութիւնը կամ համայնքը իր ամբողջութեամբ և խաղաղ, հանգիստ ու ապահով նրա առօրեայ կեանքը։ Բայց երբ համայնքի կամ հասարակութեան բաղկացուցիչ մասնիկները՝ անհատները զուրկ են կրթութիւնից, ժամանակակից արհեստներից, ապրում են միաժամանակ այնպիսի երկրում, ուր քրիստոնեայ կամ հայ ժողովուրդը հնարաւորութիւն չունի, իր առօրեայ ապրուստը հայթայթելու համար, ժամանակակից ազգաբնակութեան նման՝ ամեն տեսակ գործի դիմելու, այդպիսի մի հասարակութիւն ընդհանրապէս չէ կարող բարեկեցիկ լինել և խաղաղ, հանգիստ ու ապահով կեանք վայելել։ Թողնելով մի կողմ՝ թէ ագիտութիւնը ինչպէս քայքայեց մեր երբեմնի համեմատաբար բարեկեցիկ վաճառականութիւնը երկար տարիներից ի վեր, պատենք Թաւրիզի տներն ու փողոցները, և որքան անգործ մարդիկ կը գտնենք մենք։ Պարապ են հասակաւոր մարդիկ, պարապ են երիտասարդները։ Եթէ համարենք ներկայ կեանքի համար հասակաւորներին ապիկար, ինչ է ներկայացնում երիտասարդութիւնը։ Թերուսութեան ցէնը ծոցերում հում դիմեն նրանք, որ օգտակար լինեն թէ իրանց և թէ ուրիշին։ Փաստ է, որ թերուսը աւելի վտանգաւոր է, քան ագէտը։ Եւ եթէ քիչ խորազնին հայեացքով կարողանանք թափանցել զանազան հասարակական այլանդակ երևոյթների աչքերը, մենք փոխանակ մեղադրելու առերևոյթս մեղ երևացող մեղապարտներին՝ աւելի կը մեղադրենք նրանց, որոնք հնարաւորութիւն են ունեցել թոյլ չը տալու հասարակական չարիքների բեղմնաւորվելուն, հասարակութեան ճնասակար տարրերի բազմանալուն, բայց անհեռատեսօրէն թերացել են իրանց պարտականութիւնների մէջ և ակամայից բոլոր չարիքների իսկական դրդապատճառները համարվել։ Մի՞թէ կարելի է վիճել, որ եթէ կանոնաւոր կրթարաններ ունենայինք, ուր ժամանակի ընթացքում հնարաւոր լինէր նոյն իսկ ժամանակակից արհեստներ կամ զանազան ժամանգիտութիւններ անցնել, մենք այսքան պարապ մարդիկ կունենայինք։ Պարապ, անգործ մարդը հակամէտ չէ՞ ճնասակար լինելու, նոյն իսկ չարիքների պատճառ դառնալու ակամայից... Այսօր եթէ, համեմատաբար, դեռ ականատես չենք պարապութիւնից, անգործութիւնից առաջ եկող մեծաթիւ երևոյթների, չէ կարելի երաշխաւորել ապագայի մասին...

Ի՞նչ անի ծխական դպրոցներ աւարտած և ամեն ինչ կիսատ թողած պատանիութիւնը. մի՞թէ նա իրաւունք չունի բանելու կարող մարդկանց օգնելից և ասելու. «Ուսում տուէք մեզ, որպէս զի վաղը մի մի չարիք չը լինենք ձեր գլխին»։

Ուսման նշանակութիւնը չենք ասում, որ թաւրիզեցիք մեզ չափ չը գիտեն. կարող մարդիկ արդէն իրանց զաւակները ուղարկում են Ռուսաստան և արտասահման։

Կարծում ենք, որ մօտ 100 աշակերտ կունենանք դրսում. իրանց զաւակների համար հազարներ ծախսող մեր հարուստները, եթէ դրամական փշրանքներ միայն զոհաբերելու լինեն յանուն Կենտրօնականի, ժամանակին այլ ևս միջնակարգ կրթութեան համար պէտք չենք ունենալ դրսում մեծ թւով աշակերտութիւն ունենալ։ Եթէ վերոգրեալ աշակերտութեան վրա ծախսված զումարի կէսը, նոյն իսկ մի քառորդը Թաւրիզի դպրոցի վրա ծախսվի, հաւատացած ենք, որ արդիւնքը անհամեմատ կը լինի։

Վերջացնելով մեր խօսքը, մի աւելորդ և վերջին անգամ կրկնում ենք, որ մեր կարող մարդիկ, հարուստները, եթէ մեզ կանոնաւոր կրթութիւն տալու հոգում լինէին, եթէ մտածէին, որ գոյութիւն պահպանելու համար մարդուն կրթութիւն կամ արուեստ ու արհեստ է պէտք, զինէին մեզ այդ զէնքերով և նետէին գոյութեան կռիւի մէջ, այն ժամանակ թէ հասարակութիւնը ընդհանրապէս բաղդաւոր կը լինէր և թէ մեր հարուստ, կարող մարդիկ առիթ չէին ունենալ այսքան տրտնջալու, մեղադրելով ուրիշներին, առանց հասկանալու որ իսկական մեղաւորները իրանք են...

Հայի հոգեբանութիւնը թուրքը աւելի լաւ է ըմբռնել, քան մենք։ Թուրքը առածը ասում է. «Էրմանի վերմազ դօկկուզի, եեար թօփուզի, վերար օթուզի» (հայը չի տալ ինն, գաւազան կուտի՝ կը տայ երեսունը)... Որքան իմաստ ունի այս առածը։ Հէնց մեր այն հարուստները, որոնք այսօր դժուարանում են «ինները» տալ, քիչ անգամներ են «թօփուզի» շնորհիւ «երեսունը» տուել...

Ինչու՞ այսքան կարճատես լինել և առիթ տալ «թօփուզ» վերցնողների թւի բազմանալուն...

Հայ իրականութեան ներկայ յուսահատ կացութեան դրդապատճառը, ամենուրեք, մի՞թէ տգիտութիւնը չէ։

Հայ հարուստներ, հէնց ձեր անձնական շահը պահանջում է մաքառել տգիտութեան դէմ, եթէ հանգիստ ապրել ու վայելել էք ուզում...

Իբօ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

30 յունիսի

ԿԱԶԱՆ։ Բացվեց բուժարան-ապաստարան տրախօմայով հիւանդների համար, որը հիմնվել է նահանգապետ Ստրիժէվսկու ամուսնու մերձաւոր մասնակցութեամբ և պրոֆէսոր Աղաբաբովի նախաձեռնութեամբ, Շաստվայա և Օկսնօշնիկով ստաբօ-օբրիազիների առատ նուիրատուութեամբ։ Բուժարանը բացված է ի յիշատակ հռչակաւոր ակնաբոյժ Աղամիւկի։

ՆԻԺԵՐՈԿ։ Ուրբաթի ժամանակ տեղատարափ անձրևի հետ միասին՝ ապանվեց Օրիզբաում (Մէքսիկա) 100-ից աւելի մարդ։

ԲԵՐԼԻՆ։ Ըէյխստագի նստաշրջանը փակվեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հողաբարեկարգութեան գլխաւոր վարչութիւնը կովկաս ուղարկեց գաղթականական վարչութեան հրամանատարի օգնական Տիւորտէվսկուն՝ գաղթականական գործի հետ ծանօթանալու նպատակով։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌՈՒԲԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմված 1880 թ.

(Գուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Յ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վէներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—11—ժ. աչքի, ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒՀԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ. Փ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վէներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Ն. Վ. ԱԼԲՐԵԽՏ—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։

Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՑԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 ժ. ներքինհ. և երեխայոց հիւ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Մ. ՏՈՒՐԲՕՎԻԶ1½—2—ժ. մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՑԱ-ԷՆԳԵԼ—6— հ. ժ., մանկաբարձ., կանանց և երեխայոց։

Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքինիք և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Զքաւորները ձրի։ Հաժախտհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Հիւանդների բաժանմունքով

Թիֆլիս, Ելիզավետինսկայա փ., 79, տել. 1026.

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր.

ՄԻՐ. ԱՂԱՋԱՆԵԱՆ—առ. ժ. 11—12-ը միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւան դ (երկուշ., չորեքշ., ուրբ.)։

Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ—առ. ժ. 11—12-ը ջղային և ներքին հիւանդութիւններ։

Մ. Պ. ԿԻՄՕՆՏ—առ. ժ. 11—12-ը վիրաբուժական հիւանդութիւններ։

Ս. Ա. ԼԻԻՐԻ—առ. ժ. 11—12-ը քթի բերանի և ականջի հիւանդութիւններ։

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ—առ. ժ. 10—11-ը ներքին և երեխաների հիւանդութիւններ։

Մ. Ե. ՄԶԱՐԷՈՒԼՕՎ—ցեր. ժ. 1—2-ը կաշուի և սիֆիլիսի հիւանդութիւններ (երեքշ., հինգշ., շաբաթ)։

Լ. Մ. ՄՕՆԻՆ—ցեր. 1—2-ը կանանց հիւանդ. և մանկաբարձ.։

Բժշկութիւն էլեքտրականութեամբ, մասաժով և հիդրօզով։ Միկրօսկօպիական, բակտերիօլոգիական և քիմիական հետազօտութիւններ։ Ծննդի պատասխանում։ Ծծմայրի և ջնջութիւն։ Վճարը խորհրդի համար 50 կօպէկ։ Դպեղարվեստները և հարմարությունները լաւ համաձայնութեան։ Հիւանդների բաժանմունքը բաղկացած է թէ ընդհանուր և թէ առանձին սենեակներից։

(Է. Ե. ու.) 236. 100—39

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Ամարային երթևեկութիւն

(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից մեկնում է

ԲԱԳՈՒ՝ ՊՕՍՏԱՏԱՐ գնացքը 11 ժ. 38 ր. երեկ., Գանձակ է հասնում 6 ժ. 1 ր. առ., Ելիսավ՝ 7 ժ. 58 ր. առ., Հաջի-Կաբուլ 1 ժ. 12 ր. ցերեկ. Բալաջարի 4 ժ. 43 ր., Բագու՝ 6 ժ. 7 ր. երեկ.։ ՄԱՐԴԱՏԱՐ ԳՆԱՑՔ № 6՝ 7 ժ. 36 ր. առ., Գանձակ է հասնում 1 ժ. 41 ր. ցերեկ., Ելիսավ՝ 3 ժ. 36 ր. ցերեկ., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 15 ր. երեկ., Բալաջարի՝ 11 ժ. 37 ր. գիշ., Բագու՝ 12 ժ. 44 ր. գիշ.։ ՄԱՐԴԱՏԱՐ ԳՆԱՑՔ № 12՝ 10 ժ. 11 ր. երեկ., Գանձակ՝ 4 ժ. 13 ր. առ., Ելիսավ՝ 6 ժ. 8 ր. առ., Հաջի-Կաբուլ՝ 10 ժ. 32 ր. Բալաջարի՝ 1 ժ. 44 ր. ցերեկ., Բագու՝ 2 ժ. 18 ցերեկ.։

ԶՈՒՂՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ ՊՕՍՏԱՏԱՐ 1 ժ. 44 ր. գիշեր., Ալեքսանդրոպոլ է հասնում 12 ժ. 35 ցերեկ., Ուլուխանլու՝ 6 ժ. 11 ր. առ., Զուլֆա՝ 1 ժ. 10 ր. գիշեր.։ ՄԱՐԴԱՏԱՐ ԱՊՐԱՆՔ. 5 ժ. երեկ., Ալեքսանդրոպոլ է հասնում 3 ժ. 38 ր. առաւ., Ուլուխանլու՝ 9 ժ. 12 ր. առաւ., Երևան՝ 10 ժ. 7 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ՝ ԱՐԱԳ. ԳՆԱՑՔ 8 ժ. 31 ր. երեկ., Բաթում է հասնում 7 ժ. 41 ր. առ.։ ՊՕՍՏԱՏԱՐ՝ 9 ժ. 4 ր. երեկ., Բաթում է հասնում 10 ժ. 33 ր. առ.։ ՄԱՐԴԱՏԱՐ՝ 1 ժ. 1 ր. գիշ., Բաթում է հասնում 2 ժ. 34 ր. ցերեկ.։

Թիֆլիս է հասնում

ԲԱԳՈՒԻՑ՝ ՊՕՍՏԱՏ. ԳՆԱՑՔԸ 8 ժ. 6 ր. առաւ. ՄԱՐԴԱՏԱՐ № 5՝ 12 ժ. 11 ր. գիշ., ՄԱՐԴԱՏԱՐ. № 11՝ 10 ժ. 45 ր. առ.։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ ԱՐԱԳ. 9 ժ. 36 ր. առ., ՊՕՍՏ. 10 ժ. 38 ր. երեկ., ՄԱՐԴԱՏԱՐ՝ 8 ժ. 42 ր. առ.։

ԶՈՒՂՖԱՑԻՑ-ԵՐԵՒԱՆ՝ ՊՕՍՏ. 6 ժ. 26 ր. երեկ. ՄԱՐԴԱՏԱՐ-ԱՊՐԱՆՔ. 6 ժ. 27 ր. ցերեկ.։

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Մասնագէտ վէներական (սիֆիլիս), միզասեռական և մորթու ցաւերի։ Ընդունում է հիւանդ. Կովկասեան հանք. Ջրերում—ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ և ԿԻՍԼՕՎՕԴՍԿՈՒՄ։ Հասցէն՝ Կիսլօվոդսկ, հիւրանոց «Ռօսսիա»։

(օ. մ.) 100—98

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մաշ Բաղլինջներին

Նորութիւն. rէկլամ չէ.

«ԿԼՕՊՕՎԻՆ»

Շուտափոյթ ոչնչացնում է բաղլինջներին և նրանց սաղմը։ Սրուակի գինը 35 կօպ.։ Պահեստը միայն ԱԽՕԲԱԶԻ մօտ, ԹԻՖԼԻՍՈՒՄ։ Ուղարկում ենք վերադիր վճարով։ Դեղավաճառներին զեղչ։ Պահանջեցէք յամառօրէն «ԿԼՕՊՕՎԻՆ ԱԽՕԲԱԶԻ»։

Հասցէ՝ Тифлисъ, памятникъ Воронцова, ул. Некрасова, № 14, складъ Ахобадзе.

(ա.օ.) 568. 30—10

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ԳԱՆՍԻՕՆ

ՑՈՎՍԷՓ

Մելիք-Չինաեւանցի

Тифлисъ, Лермонтовская ул., № 4 (близъ III мужск. гимназіи)

Ընդունվում են աշակերտներ գիշերօթիկ և երեկոյեկ և պատրաստվում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Աւանդվում են ռուս, հայ, գերման, լատին և ֆրանսիական լեզուներ։

(օ. մ.) 604. 20—1

ԱՅԳԻ-ՃԱՇԱՐԱՆ

ԻՒԺԱՆԷ ԸՆԿ.

Դվօրցօվայա փող., Վրաց Ազնուական. ամարային Թատրոնին կից։ Տէլէֆօն № 233.

Այդում ամեն օր նուագում է լարանուագների երաժշտախումբը՝ պ. Գ. Պալիեվի ղեկավարութեամբ, ցերեկ. ժամը 2—4-ը և երեկ. 9—2-ը գիշ.։ ՃԱՇ.—2 տեսակ կերակուր՝ 60 կ., 3 տես.՝ 80 կ., 4 տես.՝ 1 ր.։ Ամեն տեսակ ուտելեղէնների և խմիչքեղէնների համար առանձին պրէյս-կուրանտ։

Գները չափաւոր են

Այգի-ճաշարանի մուտքը ձրի է։

(ա.օ.) 546. 50—19

Բ. Հ. Կ. Մ. ԿՐԹԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻ ԲԻՒՐՕՆ

սրանով յայտարարում է իր խնամքին յանձնված դպրոցների բոլոր ուսուցիչներին և վարժուհիներին, որոնք ցանկութիւն ունեն մնալու իրանց նախկին տեղերում, ինչպէս և նրանց, որոնք կուզեն ստանալ այդ դպրոցներում պաշտօն, շտապեն մինչև յուլիսի 20-ը ուղարկել իրանց խնդիրները, հանդերձ ունեցած վկայականներով, ծառայութեան ցուցակով և իրանց հաստատուն ու ճշգրիտ հասցէներով դիմելով Баку, въ канцелярію Бакинс. Арм. Культурн. Союза. Սեկցիայի ուսուցիչներից մինչև այդ ժամանակ չը յայտնողները կը համարվեն իրանց կամքով պաշտօնաթող եղած։ Դասաւանդութիւնը դպրոցներում լինում են կամ առարկայական կամ դասարանական։ Ռոճիկ տրվում է տարեկան 360—480 ր. բացի բնակարանից, ծառայից և վառելիքից։

Փոխ-նախագահ՝ Ց. Ստեփանեան

Քարտուղար՝ Տ. Սարգսեան

(հ.գ.) 600. 3—1

ՀՕՆՕՐԲԷԻ (ՏՐԻՊՊԷՐԻ) ԴԷՄ

Նոր-միջոց—salo

«ՊԻՁԻԼԻՆ»

ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատական միջոց։ Գործադրելու ձեռնարկը կցված է արկղիկին։ Իսկականը մետաղեայ արկղիկներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։ Միաժամանակ լաւ է ներգործում թէ սուր և թէ յարատև ընթաց ունեցող դէպքերում և կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայատաք ընթացքը։

ՊԱՀԵՍՏԸ՝ Петербургъ Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.

Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախքը պօստային սակագնով։

Գտնվում է դեղատներում։ Մեծաքանակ վաճառքի համար—դեղավաճառանոցային պահեստներում։

(հ. կ.) (П. 88623) 540. 60—7

ՍՏԱՒՐՕՊՕԼԻ ՀԱՅՈՑ ՄԻԴԱՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ

համար առաջիկայ 1909/10 ուսումնական տարվայ համար հարկաւոր են.

Ուսուցիչ, շաբաթական 20—24 դաս հայոց լեզուից, թւաբանութիւնից ու գծագրութիւնից, դասագիրը 25 ռուբ.։ Աւագուսուցչութեան համար կը ստանայ երկու մեծ լուսաւոր սենեակից բաղկացած բնակարան, վառելիք և լուսաւորութիւն։

Վարժուհի, շաբաթական 14—17 դաս ռուսաց լեզուից, 25 ռուբ.։ Վարժուհին պիտի լինի հայասէր և անպայման աւարտած գիմնազիական լիակատար դասընթացքը։

Դիմել՝ Ставрополь Губ., Священнику С. Теръ-Ованнесянцъ.

(հ. կ.) 586. 3—3

Վեղեամինօվսկայա փող. №18, տուն Վարդանեանի

ՑՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ԲԱՑՎԱԾ Է

ՆՈՐ ՏՊԱՐԱՆ

„ԿՈՒԼՏՈՒՐԱ“ ԸՆԿ.

որի մասին յայտնում են «ՊՐՕԳՐԷՍ» տպարանի միացեալ ընկերները ի դիտութիւն յարգելի հասարակութեան։

«ԿՈՒԼՏՈՒՐԱ» տպարանում ստացված են մեծ քանակութեամբ Ռուսաստանի յայտնի ֆիրմաներից տպագրակ. նորագոյն օրնամէնտներ, ծաղկատառեր, ինչպէս նաև հայկական բազմատեսակ տառեր։

Պատուէրները կատարվում են ճշդութեամբ, արագ և ձեռնտու ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ։

(Ե.Կ.Ե.) 602. 3—1 Ցարգանօք՝ ՏՊԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԸՆԿ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ ստորև յիշված ներկայ տարվայ յունիսի 26-ին տեղի ունեցած առաջին աճուրդի ժամանակ չը վաճառված կայքերի կրկնաճուրդը տեղի կունենայ ներկայ 1909 թւի յուլիսի 3-ին, ուրբաթ օր, առաւօտեան ժամը 11-ին, Ընկերութեան կացարանում, Պուշկինեան փողոցի վրա։ Վաճառվելիք կայքերի մասին հարկաւոր տեղեկութիւնները կարելի է ստանալ Ընկերութեան դիւանատանը առաւօտեան ժամը 10—2 ցերեկվայ։

1-ին քաղաքամասում՝ ԹԱՅԻՐՕՎ ԻՒԱՆ (ժառանգ.), Վերայում։
» ՎԱՀԱՆԵԱՆՑ ՎՐԱՄ և ԲԱՂԴԱՍԱՐ, Կաղբէկկայա փող.։
» ԳՈՒՆԴԻԵՎ ԱԼԷՔՍԱՆԴՐ, Կօրիյսկայա փողոցում։
4-րդ քաղաքամասում՝ ՇԱՆՇԻԵՎ ԻՒԱՆ, Վօզնեսենսկայա փողոց և Կօլօբեան նրբանցք։
5-րդ քաղաքամասում՝ ՄԱՆՈՒԷԼՕՎ ՍԱՐԳԻՍ, Նորաշէնի փողոցի և Արխիմանդրայա նրբանցքի անկիւնում։
6-րդ քաղաքամասում՝ ՄԻԿԱՔԷ ԳՐԻԳՕՐԻ, Դիլիջանսկայա փողոցում։
7-րդ քաղաքամասում՝ ՎԱՐԴԱՆՕՎ ՊԱՊԱ, Մետեխի նրբանցք (Կաղարօվսկայա նրբանցքում)։
» ԳԱԼՈՒՍՏՕՎ ՊԵՏՐՈՍ, Դուրգայլսկայա փողոցում։
» ՔՕՉԱՐՕՎ ՍՏԵՊԱՆ, Զաքաթալսկայա փողոց (Զինգիլսկայա փողոց)։
» ԾՕՎԵԱՆՕՎ ԳԼԱԽԱ, Լազարէվսկայա փողոցում։
» ՄԻՐԶՕԵՎ ՕՏԵՊԱՆ, Սաբուրսկայա նրբանցքում։
» ԴԱՒԻԴՕՎԱ ԴԱՐԻԱ (Հայրապետովա), Շեմախինսկայա և Բայդարանսկայա փողոցներում։
» ՄԽԻԹԱՐՕՎ ՕՀԱՆԷՍ, Մախատսկայա փողոցում։
» ԽՕԺՄԱԺԱՐՕՎ ԳԷՕՐԳԻ, Շեմախինսկայա և Նուխինսկայա փողոցների անկիւնում։
» ԾԱՏՈՒՐՕՎ ԱԼԷՔՍԱՆԴՐ, Նուխինսկայա և Բայդարսկայա փողոցների անկիւնում։
» ՄԵԼԻՔՕՎ ԱՆՏՕՆ, Պետրօ-Պաւլօվսկայա և Դաղեստանսկայա փողոցների անկիւնում։
» ԱԿՕՊՕՎՆԵՐ ՕՀԱՆԷՍ և ԵԼԻԶԱՒԵՏԱ, Շամխորսկայա փ.։
9-րդ քաղաքամասում՝ ԲՕՅԱԽՉԵԱՆՑ ԳՐԻԳՈ., Անդրէեվսկայա փողոցում։
» ԱԲՐԱՄՕՎ ԻՍԱՑ, Վելիկօ-Կնեաժէսկայա փողոցում։
10-րդ քաղաքամասում՝ ԼԷՕՆԻԶԷ ՆԻԿՕԼԱՑ, ԱԼԷՔՍԱՆԴՐ և այլն, Աւճալեան փ.։
» ԿՈՒԼՈՒՄԲԷԳՕՎԱ ՕԼԳԱ, Գօրիյսկա փողոցում։
» ՆՕՎԻԿԱՑՏԵՍ ԱՒԳՈՒՍՏՍ, Միխայլօվսկայա, Սագուրամսկայա և Գլդանսկայա փողոցներում։
» ՄԱԼԵԱՆՑ ՕՀԱՆԷՍ (անցել է Շերմազանով Նիկոլային) Բատումսկայա փողոցում։
» ԳՈՒՆԴԻԵՎ ԱԼԷՔՍԱՆԴՐ, Բուլվարնայա փողոցում։
» ԺԱԲԻՆ ԻՒԱՆ, Քութայիսեան փողոցի և Դիդուբէյսկայա նրբանցքի անկիւնում։
» ԼՈՒԿԻԱՆՕՎՆԵՐ ԳԱՒՐԻԻԼ, ՖԷՕԴԷՆ և ՊԵՕՏՐ, Անենսկայա և Սունժէնսկայա փողոցներում։

ՁԵՂԱԾ ՆՈՐՈՒԹԻՒՆ!

«ԲՕՆԷՐ» ժամացոյցը զանազանվում է մեխանիզմի առանձին ամրութեամբ և մինչև բօպէները ուղիղ ընթացքով։ «ԲՕՆԷՐ» ժամաց. կապոյտ պողպատից է (այլ ոչ սև), շատ տափակ, էլեգանտ տեսքով, արտաքին անկէբային մայատնիկով։ Ընթացքը 15 քարով։ Լարումը 40 ժամը մի անգամ։ «Բէմոնտուար»։ Գինը՝ 12 ռուբ. փոխարէն միայն 3 ր. 25 կ., 2-ը՝ 6 ռուբ.։ Ուղարկվում է ստուգելուց յետոյ, 8 տարվայ երաշխաւորութեամբ, վերադիր վճ. և առանց կանխավճ.։ Մինչև 4 ժամաց. ճանապարհածախքը 40 կ. (Սիբիր՝ 75 կ.)։ Նոր ոսկուց նորաձև շղթաներ՝ ըրէլօկով—75 կօպ. և 1 ր. 50 կ., երկարը՝ 2 ր. 50 կ. և 3 ր. 50 կ.։ Հասցէագրել՝ Т-во „Электіонъ“, Варшава. Отдѣл. 23.

(18, յուլ. 2, 16) (В. 37876) 531. 3—2

„ՊՐՕՎՕԴՆԻԿ“

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՐԻԳԱՅՈՒՄ

1897 թ. 1888

ՊՐՕՎՕԴՆԻԿ ԿԱՏԱՐՈՒՄ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ՊԱՀԵՍՏԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Սօլօլակսկայա փող., № 4.

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ

ՐԷԶԻՆԱՊԱՏ ԱՆԹԱՓԱՆՑԻԿ ՎԵՐՆԱԶԳԵՍՏՆԵՐ

Արտասահմանեան նոր ձևի, պատրաստված անգլիական ամենալաւ կտորներից սկսած մինչև ամենաէժան կտորները։

ՐԷԶԻՆԱՊԱՏ ՊԼԱՇՁՆԵՐ ԵՒ ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ պարոնայք օֆիցէրների համար։

ՐԷԶԻՆԱՊԱՏ ԿՏՈՐԵՂԷՆՆԵՐ զանազան կարիքների համար։

ՐԷԶԻՆԻ ՍՊՈՒՆԳՆԵՐ

ՍԱՆՐԵՐ եղջերեայ ըէզինից

Հատավաճառություն աշխարհի ամենալաւ

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ „ՊՐՕՎՕԴՆԻԿ“

(№ 4) 25—19

Электропечатня Н. Г. Аганьянцъ

Полицейская 7.